ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը շարունակել է ակտիվորեն համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության տարբեր ինստիտուտների, այդ թվում՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի և ՄԱԿ Մարդու իրավունքների պայմանագրային մարմինների հետ: 2019թ. հոկտեմբերի 17-ին Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նիստի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Հայաստանն ընտրվեց Մարդու իրավունքների խորհրդի անդամ 2020-2022թթ. ժամանակահատվածի համար, ինչը լրացուցիչ պատասխանատվություն է առաջ բերում մարդու իրավունքների ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման տեսանկյունից:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրելու, այնուհետև այն վավերացնելու կամ հաստատելու արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կկատարի ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում ստանձնած հանձնառությունը:

Վավերացնելով Արձանագրությունը՝ Հայաստանը կստանձնի պարտավորություն ընդունել հաղորդագրություններ (կոմունիկացիաներ) «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հուլիսի 22-ին) և դրան կից երկու լրացուցիչ արձանագրությունների «Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր Արձանագրություն (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005թ. մարտի 21-ին) և «Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր Արձանագրություն (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005թ. հուլիսի 3-ին) դրույթների խախտումների վերաբերյալ:

Արձանագրության վավերացումը թույլ կտա էլ ավելի ամրապնդել Հայաստանի ու ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի ու ՄԱԿ մարդու իրավունքների պայմանագրային մարմինների, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների

հարցերով ՄԱԿ կոմիտեի հետ փոխգործակցությունը՝ էլ ավելի բարձրացնելով մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2011թ. դեկտեմբերի 19-ին ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐՏԱԿ ԱՊԻՏՈՆՅԱՆ**